

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայրենի լեզվի ուսուցման հիմնահարցը բոլոր ժամանակներում էլ արդիական հնչեղություն է ունեցել: Իրենց հրապարակումներում այդ հարցին անդրադարձել են անցյալի հայ մեթոդիստներից շատերը: Մայրենի լեզվի ուսուցման հարցը քննարկվել է երեք տեսանկյունով.

ա) մայրենի լեզվի ուսուցման ընդօրինակման մեթոդ /ընտանիք, միջավայր, ուսուցչի խոսք, այլ միջոցներ/,

բ) ընթերցանություն և դրա հետ կապված այլ աշխատանքներ,

գ) քերականություն և դրա հետ կապված այլ աշխատանքներ:

Ընդօրինակման ճանապարհով մայրենի լեզվի յուրացմանը հատուկ տեղ էին տալիս հայ մանկավարժներից Խ. Աբովյանը /1809-1848/, Ս. Նալբանդյանը /1829-1866/, Ս. Սանդիսյանը /1875-1915/, Առ. Բահաթրյանը /1848-1883/, Ղ. Աղայանը /1840-1911/ և ուրիշներ:

«Այն լեզուն,- ասում էր Ս. Սանդիսյանը,- որ կամենում ենք նորան ուսուցանել, այսինքն՝ մաքուր, կանոնավոր, քաղցրալուր լեզուն, պետք է անդադար հնչեցնենք նորա ականջում, այնպես որ մեր լեզուն մի կենդանի խոսակցություն լինի նորա սրտի հետ»¹:

Ըստ Սանդիսյանի՝ երեխային լեզվական առաջին կարողություններն ու աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունները տրվում են լեզվի ուսուցման բնական ճանապարհով, այսինքն՝ խոսելու և լսելու միջոցով:

Մայրենի լեզվի ուսուցման գործում կենդանի խոսքի ընդօրինակմանը կարևոր տեղ էր տալիս նաև Առ. Բահաթրյանը: Նա հատուկ ուշադրություն է դարձրել բնագրի շուրջ տարվող հարցազրույցի և ուսուցչի նախապատրաստական խոսքի վրա, մշակել է դրանց տեղին ու ճիշտ օգտագործման մեթոդական ձևեր ու հնարներ:

Նրա կարծիքով, ուսուցչի խոսքը, որը երեխան ամեն բոլոր լսում է, պիտի լինի մաքուր, ճիշտ, «քանզի ինչ-որ գործում է ուսուցիչը, նույնը գործում են նաև նորա աշակերտները, ինչպես որ նա է խոսում, այնպես էլ նոքա կխոսին»²:

Ուսուցչի խոսքին մեծ տեղ են հատկացրել նաև Խ. Աբովյանը և Ս. Նալբանդյանը: Խ. Աբովյանը պնդում էր, որ տարրական ուսուցումն անպայման պետք է մայրենի լեզվով տարվի՝ դրա հետ կապելով ազգի առանձնահատկություններին, մշակութային հաղորդակից լինելու հնարավորությունը: Իսկ Ս. Նալբանդյանը, մեծ տեղ տալով ընտանիքում մայրական շրթունքներից տարերայնորեն լեզու սովորելուն, կարևոր տեղ է հատկացրել նաև ուսուցչի

խոսքին՝ թե որպես մայրենի լեզվով ասված կենդանի խոսքի լավագույն օրինակի և թե որպես աշակերտի սրտի ու մտքի վրա դրականորեն ներգործելու լավագույն միջոցի:

Անցյալի հայ մեթոդիստները մայրենի լեզվի ուսուցման կարևոր աղբյուր են համարել նաև ընթերցանությունը և դրա հետ կապված այլ աշխատանքներ՝ բառային աշխատանքը, կարդացածի բովանդակության վերարտադրումը և այլն:

Խ. Աբովյանը գրեթե արդիական կարծիք է ունեցել դպրոցում ընթերցանության հետապնդած նպատակների մասին: Նրա կարծիքով ընթերցանությունը ոչ միայն մայրենի լեզվի ուսուցման ու դրա հետ կապված նաև որոշակի գիտելիքների հաղորդման, այլև երեխայի մեջ ինքնուրույն կարողալու ունակության մշակման միջոց է:

Մեծ լուսավորիչը գտնում էր, որ լեզվի ուսուցումն սկսվում է ամենից առաջ բառապաշարի կուտակումից, որը շինանյութ է տալիս լեզվին, հիմք դառնում նրա հետագա զարգացման, հարստացման ու կատարելագործման համար. երեխան չի կարող խոսել, արտահայտվել, իր մտքերն ուրիշների համար հասկանալի դարձնել, եթե անհրաժեշտ բառապաշար չունի:

Մայրենի լեզվի ուսուցման կարևոր միջոց համարելով անծանոթ բառերի ու դարձվածքների բացատրությունը՝ Աբովյանը հանձնարարում էր իր աշակերտներին. «Ձեզ համար սուրբ օրենք շինեցեք մեկ բառ, մեկ խոսք չի կարողալ առանց միտք իմանալու, չեք գիտում, հարցրեք»³:

Բառն այն ժամանակ էր Աբովյանը յուրացված համարում, երբ աշակերտը ոչ միայն բացատրում էր այն ու մեկնաբանում, այլև օգտագործում էր իր խոսքի մեջ, իսկ սա տվյալ հարցի միանգամայն ժամանակակից մոտեցում է:

Ղ. Աղայանը ևս Աբովյանի նման այն կարծիքին էր, որ ոչ մի բառ երեխայի համար չպետք է մութ մնա. պետք է հասնել կարդացածի լրիվ, ճիշտ ու խոր յուրացմանը, որն էլ նա կապում էր զննականության, բառի ու բառիմաստի համատեղ ըմբռնման հետ: «Մեզ հարկավոր է, որ աշակերտը ոչ միայն հասկանա բառերը և նոցա մասերը, - ասում էր նա, - այլև իրերը, առարկաները և նոցա մասերը, որպեսզի ոչ միայն կարողանա պատմել յուր լսածն ու կարդացածը, այլև նկարագրել իր տեսածը»⁴: Աղայանը գտնում էր, որ աշակերտի բառապաշարը հարստացնելու, լեզուն ճոխացնելու համար պետք է նախ նրա միտքը հարստացնել դրանց համապատասխան ընկալումներով ու պատկերացումներով, հասկացություններով ու գիտելիքներով, որովհետև «լեզուն մտքի արտահայտությունն է. մարդ որքան որ բան գիտե, այնքան բանի վերա էլ խոսելու կարողություն ունի»⁵:

Բառաձևի ու բառիմաստի համատեղ ուսուցման այս առաջադիմական տեսակետն էլ այսօր էլ գործադրվում է մեր դպրոցում:

Մայրենի լեզվի տարրական դասընթացում կարևորելով գործնական կերպով մայրենի լեզվի ուսուցումը՝ Ղ. Աղայանը մեծ ուշադրություն է դարձրել նաև ընթերցանության բնագրերի ընտրությանը՝ մեծ տեղ տալով «Ժողովրդական տաղանդի բարիքներին»՝ հեքիաթին ու ոտանավորին, որոնք նա համեմատում էր մայրական կաթի հետ:

Ս. Մանդինյանը բառիմաստի ուսուցման հիմքում դնում էր զննությունը: Ըստ նրա՝ բառի ուսուցումը կապված է իրի կամ գաղափարի ուսուցման հետ, ուստի բառը յուրացնել տալու համար ամենից առաջ այն նշանակող գաղափարը պետք է յուրացնել տալ, այլապես բառի ուսուցումը կդառնա զուտ ձևական աշխատանք և ոչ մի հետք չի թողնի աշակերտի մտքում:

Շատ մեծ տեղ է տվել դասարանական ընթերցանությանը Առ. Բահաթրյանը. նա գրեթե այժմեական պահանջներ է առաջադրում մայրենի լեզվի ուսուցման ճիշտ ու արդյունավետ կազմակերպման վերաբերյալ, քանի որ մայրենի լեզուն տարրական դպրոցի /որն այն ժամանակ դպրոցի հիմնական տիպն էր/ կենտրոնական ուսումնական առարկան էր:

Նա լեզվի ուսուցման հիմքում դնում էր լեզվի ու մտածողության անխզելի կապի ու դրանց համատեղ ուսուցման պահանջը: «Լեզուն ոչ այլ ինչ է, եթե ոչ բառերով հայտնած միտք, ուստի լեզուն ու միտքը, խոսելն ու մտածելը սերտ կապված են միմյանց հետ անընդմիջապես: Այդ պատճառով էլ դասավորության մեջ ամենևին չպետք է բաժանեն միմյանցից մտածելն ու խոսելը»⁶:

Նրա կարծիքով ընթերցանությունը հնարավորություն է տալիս ոչ միայն «կարդալ», այսինքն՝ բառեր ու նախադասություններ արտասանել, այլև կարդալ՝ զգալ. մտածել, սեփականել այն մտքերն ու հասկացությունները, որոնք շարադրված են կարդացած բնագրում, այն բառերն ու լեզվական ձևերը, որոնցով արտահայտված են այդ մտքերը: «Մեր լեզուի ձևերի, գեղեցկության, ոճերի, ուղղագրության գլխավոր հիմք պիտի լինի ընթերցարանը, երեխան ուղիղը, գեղեցիկը ըմբռնում է միայն ևեթ յուր ականջներովն ու աչքերով»⁷, - ասում էր նա:

Առ. Բահաթրյանը մայրենի լեզվի ուսուցման մեջ բացառիկ կարևոր տեղ էր հատկացնում աշակերտների բանավոր խոսքի մշակմանը՝ այն համարելով մայրենի լեզվի ուսուցման հիմքը: Բանավոր խոսքի մշակման ու զարգացման համար որպես կարևոր միջոցներ նա առաջարկում էր ընթերցանության հետ կապված բացատրություններն ու մեկնաբանությունները, համառոտ ու ընդարձակ վերապատմումները, ամփոփիչ հարցերին տրվող պատասխանները, որոնք այսօր էլ գործադրելի են մեթոդիկայում:

Քերականության միջոցով մայրենի լեզվի ուսուցման հարցն էր առաջ քաշում Ն. Տեր-Ղևոնդյանը: Նա գտնում էր, որ ճիշտ է, բացատրական ընթերցանության միջոցով երեխան բազմաթիվ լեզվական ձևեր ու օրինաչափություններ է յուրացնում, սակայն այդ բոլորը նա յուրացնում է անգիտակ-

ցորեն, ընդօրինակման ձևով միայն, այնինչ խիստ անհրաժեշտ է, որ դրանք դրված լինեն գիտակցական հիմքերի վրա: Չժխտելով գործնական ճանապարհով մայրենի լեզվի ուսուցման անհրաժեշտությունը տարրական դասարաններում Տեր-Ղևոնդյանը խիստ կարևոր էր համարում նաև դրան զուգընթաց տարվող քերականության ուսուցումը՝ որպես լեզվական երևույթների գիտակցման, աշակերտի բանավոր ու գրավոր խոսքը քերականության վերահսկողության տակ դնող միջոցի:

Տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսուցման ընդհանուր համակարգում քերականության ուսուցմանը որոշակի տեղ է տվել նաև Ս. Մանդինյանը: Նրա կարծիքով սկզբում քերականության ուսուցումը պետք է կրի զուտ գործնական բնույթ՝ առանց «ուսումնական անունների»՝ տերմինների, իսկ հետո պետք է սովորեցնել քերականական ամենահիմնական հասկացությունները միայն՝ դրանք կապելով կենդանի լեզվի հետ, որպեսզի «դոքա մեքենական կրթություն չդառնան», այլ որ «աշակերտները գործնական ճանապարհով իրենք զգան բառերի փոփոխությանց կարևորությունը»:

Մանդինյանի՝ գործնական ճանապարհով քերականության ուսուցման այս ճիշտ սկզբունքը, ուր հաշվի են առնված երեխաների տարիքային ու հոգեբանական առանձնահատկությունները, մտավոր պաշարն ու վերացական հասկացություններն ըմբռնելու սահմանները, այսօր էլ իր տեղն ունի տարրական դասարանների մայրենի լեզվի ուսուցման համակարգում:

Մայրենի լեզվի քերականության տարրական դասընթացի ձևավորման գործում հսկայական դեր խաղաց Առ. Բահաթրյանի «Քերականություն աշխարհիկ լեզվի» գիրքը, ուր քննարկվում էին թե քերականության տարրական դասընթացի խնդիրներն ու նպատակները, թե տարրական դասարաններում քերականության դասավանդման մեթոդական ձևերն ու հնարները:

Ինչպես տեսնում ենք, անցյալի հայ մեթոդիստները մեծ ուշադրություն են դարձրել մայրենի լեզվի ուսուցմանն ու խոսքի զարգացմանը ընդհանրապես՝ որպես միջոցներ դիտելով ընդօրինակումը, ընթերցանությունն ու քերականությունը, բառային աշխատանքը, բովանդակության վերարտադրումը և այլն, միջոցներ, որոնք այսօր էլ կենսունակ են և օգտագործվում են մեր դպրոցում:

Գրականություն

1. Ս. Մանդինյան, Մայրենի լեզվի դասատվություն, «Արարատ», 1889, թիվ 9, էջ 491:
2. Մանկավարժական թերթ, 1878, թիվ 3 էջ 44:
3. Խ. Արոպյան, ԵԼԺ, հ.5, Ե., 1950, էջ 185:
4. Ղ. Աղայան, Երկեր, հ.4, Ե., 1940, էջ 131:
5. Ղ. Աղայան, Մշվ. աշխ., էջ 31:
6. «Մանկավարժական թերթ», 1878, թիվ 3, էջ 26-27:
7. Մանկավարժական թերթ, 1878, թիվ 4, էջ 53: